Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէր-Պէրեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ այս տարի լրանում է Նոր Սերունդ Մշակութային Միութեան հիմնադրման 50-ամեայ յոբելեանը, եւ այս առիթով կազմակերպուող հանդիսութեան ընթացքին, ի շարս այլոց, բարձր պատուի պիտի արժանանաք նաեւ Դուք՝ Միութեան կեանքում բերած Ձեր բազմարդիւն աւանդի եւ մեր ժողովրդին մատուցած ծառայութիւնների համար:

Մեծարգոյ պրն Գազանճեան,

Արդարեւ, մեծ է Ձեր վաստակը ազգային մեր կեանքում: Անդամակցելով Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեանը եւ ստանձնելով նաեւ պատասխանատու պաշտօններ նրա վարիչ մարմիններում ինչպէս Լիբանանում, այնպէս եւ Միացեալ Նահանգներում, Դուք գրական ու հասարակական բեղուն գործունէութեամբ ծառայում էք ազգային մեր կեանքի շինութեանը, Սփիւռքի զօրացմանը, երիտասարդ սերնդի հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը, հայ մշակոյթի զարգացմանը: Մեր ժողովրդի զաւակներին ծանօթ են Ձեր գրքերն ու հրապարակումները, որոնցում մեծապէս դրսեւորուում է Ձեր ազգասէր ու եկեղեցանուէր ոգին՝ քաջալերող օրինակ դառնալով նաեւ ընթերցողների համար:

Գովութեան է արժանի նաեւ Ձեր լրագրողական գործունէութիւնը, որ հայ մամուլի էջերում յոդուածների հրապարակումով սկսուել է դեռեւս երիտասարդ տարիքից: Այսօր Դուք, իբրեւ գլխաւոր խմբագիր Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան «Մասիս» շաբաթաթերթի, եռանդաշատ հոգով ներդնում էք Ձեր ջանքերը, որպէսզի հայալեզու պարբերականը արդիւնաւորութեամբ ծառայի հայ հոգու ինքնութեան ու նկարագրի պահպանմանը, հոգեւոր ու ազգային մեր սրբազան աւանդների ու արժէքների հանդէպ հաւատարմութեան զօրացմանը:

Առանձնակի գոհունակութիւն է մեզ համար եկեղեցանուէր Ձեր ծառայութիւնը, որը եւս Տիրոջ օրհնութեամբ արգասաւորուած է բարի արդիւնքով: Երկար տարիներ տարբեր յանձնառութիւններով Դուք մասնակցում էք Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու համայնքային կեանքին՝ Ձեր ջանքերը ի սպաս դնելով մեր Եկեղեցու Աստուածաշնորհ առաքելութեան իրականացմանը:

Մեծարգոյ պրն Գազանճեան,

Ազգային մեր կեանքում Ձեր արդիւնաշատ գործունէութեան բարձր գնահատանքով համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ, սիրով ընդառաջ բարեջան ձեր առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ստեղծագործական ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր ժողովրդին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինի ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 331